11423

338.1
4-21

B 2001

010

176

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ, ԲՈԼՈՐ ԾԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵՔ

338.1
4-21

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՀՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԵԼՆԵՐԻ

№ 2

ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

4-21
83

691
38

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՀՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԵԼՆԵՐԻ

Գյուղատնտեսական արտելը տնտեսությունը միասին վարելու, ինչպես և գործածական մթերքների արդյունաբերության համար կազմված աշխատավորների ժողովն է։ Արտելին մասնակցող յուրաքանչյուր անդամ իր անհատական կյանքով՝ նրա հետ վոչնչով կապված չէ, ըստ վորում արտելի աշխատանքի արդյունքը բաշխվում է նրան մասնակցողների մեջ, նրանց գործադրած աշխատանքի քանակի համեմատ։

I.

Արտելի նպատակները, իրավունքները յեվ պարտականությունները

1. Աշխատավորական հողագործական արտելը հիմնվում է . . . . . .

2. Արտելը ունի հետևյալ նպատակները.

ա.—Գյուղական անհատական տնտեսությունը փոխարինել ընկերային խելացի հիմքերի վրա կառուցված տնտեսության։

բ.—Միացնել աշխատանքը հողի վրա և այն դարձնել ավելի արդյունաբեր, հողի մշակության կատարելագործված յեղանակները կիրառելով և ընդհանրապես՝ գյուղատնտեսությունը կանոնավոր վարելով։

գ.—Ազատագրել աշխատավոր հողագործին կարիքների ճընշումից և նրա համար ապահովել մարդավայել նյութական գոյություն, մասավոր ու բարոյական հառաջադիմություն։

3. Վորպեսզի իր այս նպատակներին հասնի, արտելը,—

ա.—Իր անդամների ուժերի և միջոցների միացումով կազմակերպում է մեկ ընդհանուր հողային աշխատավորական տնտեսություն՝ վերամշակելու միացած արտադրությունը և սպառելու գյուղատնտեսական արդյունքները։

բ.—Ընձեռնում է բոլոր միջոցները՝ հողի պտղաբերությունը պահպանելու և գյուղատնտեսությունը բարձրացնելու և բարելավելու համար։

գ.—Հնարավորության չափ կազմակերպվում են ոժանդակ ճյուղամունքներ, արհեստանոցներ և այլ արդյունաբերական հիմնարկություններ, որոնք գլխավորապես գյուղատնտեսության կարիքներին են բավարարում և որտեղ կարող են կիրառվել արտելի անդամների աշխատանքները։

դ.—Գյուղատնտեսական գիտելիքների տարածման, միացյալ հողագործական տնտեսության դաղափարի պրոպագանդայի և իր անդամների հոգևոր աշխարհի մակարդակը բարձրացնելու համար, կուլտուրա-լուսավորչական աշխատանք և կատարում, արտելի ընդհանուր ժողովի կողմից սահմանված չափով ու ձևով։

4. Արտելը ոգտվում է իրավական անձի բոլոր իրավունքներով, և կարող է, ինչպես առանձին անհատների, նույնպես և հիմնարկությունների հետ ստացվածային հարաբերությունների մեջ մտնել, ինչպես նաև դատարանում ոգտվում է դատավորներին տրված բոլոր իրավունքներով։

5. Իր նպատակներին ավելի լավ հասնելու համար, արտելը իրավունք ունի միանալու իր նման կոլլեկտիվների հետ և մտնելու զանազան տեսակ միությունների և կոլլեկտիվ կազմակերպությունների մեջ։

6. Արտելը ունի իր անվանական կնիքը։

II.

Արտելի կազմությունը, անդամների իրավունքները և պարտականությունները

7. Արտելը կազմվում է վարձու աշխատանքը կիրառող և արտելի կանոնադրությանը յենթարկվող քաղաքացիների աշխատավոր դասակարգերից։

8. Արտելի անդամ կարող են լինել 18 տարեկան աշխատունակ բոլոր յերկսեռ քաղաքացիները, առանց կրոնի, ազգության ու հպատակության խարության։

Ծանոթ.—Արտելի անդամներ չեն կարող լինել.—ա) կապիտալիստները, կալվածատերերը և կուլակները, որոնք ապրում են ոչ աշխատավորական արդյունքով, բ) քահանաներն և կրոնական պաշտամունքի սպասավորները, գ) նախկին ժանդարմներն և պահանորդական բաժնի պաշտոնյաները, դ) առևտրական և վաճառականական միջնորդները, ե) խելագարները, զ) Ժողովրդական դատարանով վորոշ իրավունքներից զրկվածները և համակեցության համար անհանդուրժելի վարմունքներով նկատված անձինք։

9. Արտելի անդամների ընդունելությունը և հեռացումը կատարվում է ընդհանուր ժողովի անդամների 2/3-ից վոչ պակաս ներկայությամբ կայացրած վորոշմամբ։

Արտելի մեջ անդամ ընդունվածները, ներկա կանոնադրության պահանջներին յենթարկվելու համար, պարտավորագիր են տալիս։

10. Արտելին անդամագրվելիս նրա յուրաքանչյուր իրավասու անդամ, պիտի մուծի պարտավորեցուցիչ անդամավճար, որի չափը սահմանում է արտելի անդամների ընդհանուր ժողովը։

Ծանոթ.—Ընդհանուր ժողովի վորոշմամբ, վճարի մուծումը կարող է կատարվել մի քանի նվազում։

11. Ընդհանուր ժողովի վորոշմամբ արտելի անդամավճարը կարող է լինել վոչ միայն դրամով, այլև գույքով, ինչպես և վենդանի ու մեռյալ ինվենտարով և այլն։

12. Գույքով կատարած անդամավճարը, վարչությունը գնահատակ անձնավորությունների մասնակցությամբ գնահատում է և այդ գնահատումը հետագայում հաստատում է արտելի անդամների ընդհանուր ժողովը։

13. Արտելի յուրաքանչյուր անդամ արտելի գործերի նկատմամբ ել, մյուս անդամների հետ, կրում է համահավասար պատասխանատվություն։

14. Նոր ընդունված անդամները, արտելի ստացվածային պարտավորությունների նկատմամբ կրում են նույն պատասխանատվությունը, որոնք գոյացել են մինչև իրենց՝ նրա մեջ մտնելը։

15. Արտելի յուրաքանչյուր անդամ ազատ է և ամեն ժամանակ իրավունք ունի նրա կազմից դուրս գալու։

16. Աշխատանքի անձնական մասնակցությունից խուսափելու, վարչության, ինչպես նաև ընդհանուր ժողովի վորոշումները և կարգադրությունները չկատարելու պատճառով, անազնիվ կամ այլ վարմունքների հետևանքով արտելին բարոյական կամ նյութական վնասներ հասցնելու համար,—նրա անդամները [illegible] չեն յենթարկվել զանազան տուժերի և մինչև իսկ [illegible] կարգից հեռացվելուն։

17. Արտելի յուրաքանչյուր անդամ ոգևորվում է կրոնական և քաղաքական համոզմունքների լիակատար ազատությամբ և անհատական ու ընտանեկան կյանքի ազատ գործունեությամբ։

18. Արտելի ներքին կյանքի կարգ ու կանոնը տնորինվում է ընդհանուր ժողովի կողմից մշակվող հրահանգներով։

19. Արտելի յուրաքանչյուր անդամ նրա մեջ մտնելիս ստանում է մեկ օրինակ սույն կանոնագրությունից և հաշվա-աշխատավորական գրքույկ, որի մեջ մուծվում յեն անդամի՝ արտելի հետ ունեցած բոլոր ստացվածային փոխհարաբերությունների տվյալները։

III.

Արտելի միջոցները

20. Արտելի միջոցները կազմում յեն.—

ա.—Անդամավճարները.

բ.—Կառավարական կամ այլ փոխատվություններն ու նպաստները։

գ.—Արտելի անդամների աշխատանքից ստացված արդյունքի գումարի տարեկան վորոշ յատկացումները։

դ.—Այլ հնարավոր մուտքերը։

21. Արտելի միջոցները բաժանվում յեն դրամագլուխների.—

ա.—Շրջանառության, բ.—պահեստի և գ.—հատուկ դրամագլուխների։

22. Շրջանառության դրամագլուխը կազմվում է § 20-ում մատնանշված բոլոր աղբյուրներից։ Նա գործադրվում է արտելի տնտեսության բոլոր ընթացիկ պահանջների բավարարման համար։

23. Պահեստի կապիտալը կազմվում և տարեկան աշխատանքի, արտադրության արդյունքների բալանսից ստացված զուտ յեկամտի՝ վոչ պակաս 25 տոկոսի հետ գանձումից և պատահական մուտքերից։ Պահեստի կապիտալի համար սահմանված քանակը չպիտի գերակշռի շրջանառության կապիտալի 25 տոկոսին։

Այս գումարները բացառապես ծախսվում յեն արտելի պարտքերը ծածկելու և այնպիսի նպատակների համար, յերբ նրանց ապահովության և իր ժամանակին գործադրելու համար՝ կան բավարար յերաշխիքներ։

Ծանոթ.—Արտելը իրավունք ունի պահեստի կապիտալից փոխառություններ կնքելու, պայմանով, որ տնտեսական տարվա վերջին այն կլրացնի։

24. Ընդհանուր ժողովի վորոշմամբ կարող յեն կազմվել հատուկ դրամական ֆոնդեր՝ հատուկ նպատակների համար, ինչպես որ. միլիորացիայի, պարարտացման, կրթա-լուսավորչական աշխատանքների, և այլն։

IV.

Աշխատանքի յեվ տնտեսության կազմակերպությունը

25. Արտելի յուրաքանչյուր անդամ պարտավոր է անհատական աշխատանքով մասնակցել արտելի տնտեսության։

26. Աշխատանքի շահագործումը, ոգուտ քաղելու նպատակով (վարձու աշխատանքով)՝ արտելի մեջ արգելվում է։

27. Հատուկ մասնագիտական պատրաստականություն պահանջող աշխատանքներ կատարելու համար, յեթե արտելի կազմի մեջ չկան համապատասխան մասնագետներ,—ապա այդպիսիք կարող յեն հրավիրվել Հողբաժնի միջոցով։

28. Հերկելու, ցանելու, հնձելու և այլ շտապ աշխատանքների ընթացքում, աշխատանքի կարելի է հրավիրել նաև, վորպես ժամանակավորապես մասնակցողների, արտելի վոչ անդամ անձնավորությունների։

Ծանոթ.—Փորձի ցույց տված հետևանքով կարգ և սահմանվում, վոր դյուրացնում է ժամանակավորապես մասնակցողների՝ արտելի մշտական անդամակցությանն անցնելուն։

29. Արտելի մեջ մասնագետները և ժամանակավորապես մասնակցողները, իրենց աշխատանքների ընթացքում արտելի գործերի, վորոշումների նկատմամբ մասնակցում յեն խորհրդակցական ձայնի իրավունքով, և վոչ մի դեպքում արտելի մյուս անդամների նկատմամբ՝ չեն կարող վատ պայմանների մեջ դրվել։

30. Արտելի անդամների մեջ աշխատանքի բաշխումը կատարում է կամ ընդհանուր ժողովը, կամ արտելի խորհուրդը։ Յուրաքանչյուր անդամի, ըստ հնարավորին, տրվում է այնպիսի աշխատանք, վոր համապատասխանում է նրա ուժերին, առողջությանը, ընդունակություններին և հմտությանը։

31. Արտելի անդամները պարտավոր յեն ամեն բանում, առանց այլայլության յենթարկվելու արտելի խորհրդի և այն անձնավորությունների կարգադրություններին, վորոնք նշանակված յեն աշխատանքները ղեկավարելու կամ վերահսկելու համար։ Ընդհանուր ժողովում յուրաքանչյուր անդամ իրավունք

ունի խորհրդի կարգադրությունների դեմ բողոքելու։ Սակայն մինչև նրանց փոխելը, նա պարտավոր է կատարելու իր վրա դրած աշխատանքները։

32. Բացարձակ կերպով անբարեխղճորեն կատարած աշխատանքի, առանց հարգելի պատճառների, կամայական բացակայության և ընդհանրապես աշխատանքի կարգապահության խախտման համար,—ընդհանուր ժողովը արտելի անդամին կարող է հանդիմանել, տուգանել, արտաժամյա աշխատանքների դատապարտել և վերջապես արտելի կազմից հեռացնել։

33. Արտելի յուրաքանչյուր անդամի կատարած աշխատանքի համար խիստ կերպով պահվում է հաշվարկություն։ Յուրաքանչյուր շաբաթվա վերջին հաշվա-աշխատավարական գրքույկում գրվում է լրիվ աշխատած բանվորական օրերը կամ բանվորական ժամերը, մինչև արտելի անդամի աշխատանքի ավարտելը։

34. Բանվորական օրվա տևողությունը սահմանում է ընդհանուր ժողովը, նա կարող է փոփոխվել, նայած աշխատանքի բնույթին, տարվա եղանակին, պայմաններին և այլն։

35. Աշխատանքի գնահատումը և վճարումը կատարվում է տարեկան հաշվետվությունը հաստատելուց և տնտեսական գործունեության հետևանքները պարզելուց հետո միայն։ Սակայն անդամների անհրաժեշտ պահանջները և կարիքները հոգալու դեպքում, արտելի անդամներին կարելի է տալ հաշիվ դրամներով՝ ընդհանուր ժողովի սահմանած չափով։

36, Արտելի մեջ աշխատանքի կազմակերպման (աշխատանքների բաշխումը, նրա հաշվառը, և այլն) հարցի մանրամասն կանոնավորման համար, ընդհանուր ժողովը, ներկա կանոնադրության հիմնական սկզբունքներին միանգամայն համաձայն, մշակում է իր կազմին և տեղական պայմաններին համապատասխան հատուկ հրահանգներ, որոնք պարտադիր են արտելի բոլոր անդամների համար։

37. Նպատակ ունենալով ի մի ձուլելու իր անդամների բոլոր ուժերն ու միջոցները, արտելը միևնույն ժամանակ կարող է իր անդամներին թույլ տալ ժամանակավորապես ունենալու իրենց մասնավոր տնտեսությունը, այնպիսի սահմաններով ու չափերով, որպիսին արտելի անդամների ընդհանուր ժողովը անվնաս կգտնի արտելի տնտեսության համար։

38. Իր տնտեսության մեջ աշխատելը, կատարվում է ընդհանուր ժողովի թույլտվությամբ և միայն արտելի աշխատանքներից ազատ ժամանակ։

39. Արտելի հողերի մշակումը կատարվում է ինչպես արտելի ձեռք բերած ինվենտարով, որ կազմում է նրա ինվենտարի ֆոնդը, նույնպես և արտելի անդամների ունեցած ինվենտարով։

40. Արտելի անդամների ունեցած ինվենտարով օգտվելու պայմանները մշակում է ընդհանուր ժողովը։

41. Արտելի մեջ մտնող առանձին տնտեսությունների լծկան անասունները առաջին հերթին օգտագործվում են արտելի աշխատանքների համար, և հետո միայն ծառայեցվում առանձին տնտեսությունների կարիքների համար։ Մասնավոր տնտեսությունների լծկան անասունները կարող են անցնել արտելի լիակատար տրամադրության և նրա մշակած պայմաններով մուծվել արտելի ֆոնդի մեջ, յեթե հնարավորին չափ հոգացված է նրանց բավարար կերպով պահելը։

42. Յուրաքանչյուր մասնավոր տնտեսություններում արտելի անդամի օգտագործման թողնված հողամասերի մշակման համար գյուղատնտեսական գործիքների, մեքենաների և լծկան անասունների պակաս է զգացվում, ինչպես նաև արտելի անդամների այլ տնտեսական կարիքների դեպքում,—տալ նրանք, արտելի մշակած պայմաններով, հոգացվում են նրա ինվենտարով, յերբ նրանք ազատ են լինում արտելի աշխատանքներից։

43. Ինվենտարի ֆոնդի վերաբերմամբ, արտելի ընդհանուր ժողովին է վերապահված կարգադրություններ անելը, որոնք և որոշում է նրա կազմակերպելու, պահպանելու և նրանից օգտվելու հարցերը։

44. Արտելի անդամներին պատկանող ինվենտարը, որ օգտագործվում է արտելի կարիքների համար, վերանորոգվում է ի հաշիվ արտելի։

44. Արտելում սերմացու չլինելու կամ նրա պակասության դեպքում, անհրաժեշտ սերմացուն հավաքվում է մասնավոր տնտեսություններից՝ ընտաուրքային կամ դրամական հատույցներով։

46. Արտելի տնտեսությունը տարվում է նախորոք մշակված ծրագրով,—սերմնափոխության, հողերի շերտավորման և ցանքսերի տեսակի ու բնույթի որոշումով։

V.

Աշխատանքի արդյունքների (արտադրության) բաշխումը

47. Արտելի տնտեսության բոլոր գյուղատնտեսական մթերքներն և աշխատանքի արդյունքները հաշվի չեն առնվում և արտելի ընդհանուր տնօրինմանը հանձնվում։

48. Ժողոված մթերքների կանոնավոր ոգտագործման համար նախորոք պարզում չեն,—ա) արտելի տնտեսության համար պահանջվելիք սերմացվի և արտելի անասունների կերի կարիքը. բ) արտելի անդամների և նրանց ընտանիքի անդամների պարենավորման մթերքների և նրանց մատնավոր ոգտագործման համար յեղած անասունների կերի կարիքը։

Մանոթ. 1. Մատնանշված պահանջը հաշվում և սպառման և կերի համար նշանակված չափերով։

Մանոթ. 2. Յեթե արտելի անդամները ունեն իրենց տնտեսությունը,—ապա նրանից ստացված պարենավորման և կերի մթերքները նույնպես ի նկատի և ի հաշիվ չեն առնվում, հոդ. 48-ի § Բ.-ի իմաստով՝ արտելի անդամների կարիքների բավարարման դեպքում։

49. Հոդ. 48-ի § Ա-ում մատնանշված կարիքների բավարարման համար անհրաժեշտ մթերքների քանակը հանում և արտելի լիակատար տրամադրության տակ։

50. Հոդ. 48-ի § Բ-ում մատնանշված կարիքների բավարարման համար անհրաժեշտ համարված մթերքների քանակը, բաշխվում և արտելի անդամների մեջ, ընդհանուր ժողովի սահմանած գներով։ Անդամի հաշվա-աշխատավարձական գրքույկում նշանակվում և այդ մթերքների արժեքը, վորոնք հաշվում չեն ի գիմաց այն գումարների, վոր արտելի անդամին տրվելու և. նրա՝ արտելի տնտեսության մեջ կատարած աշխատանքների համար։

51. Մթերքների հանգորդը արտելը վաճառում և խորհրդային իշխանության պարենավորման մարմինների միջոցով։

Մթերքների վաճառքից գոյացած գումարը բաժանվում և հետևյալ ձևով.—ա. ընդհանուր ժողովի վորոշման համաձայն՝ պահեստի կապիտալի, բ. պարզված պահանջի չափով՝ պարաքերի վճարման և տնտեսական ծախքերի, գ. շրջանառության կապիտալի լրացման, տնտեսության բարելավման և ընդարձակման, կուլտուրական և այլ հատուկ նպատակների տրամադրելիք ծախսերի։

52. Հոդ. 51-ում մատնանշված ծախսերը ծածկելուց և վերոհիշյալ գասավորումները կատարելուց հետո, գումարի հանգորդը, ընդհանուր ժողովի սահմանած կանոններով, բաշխվում և արտելի անդամների մեջ՝ ըստ յուրաքանչյուրի կատարած աշխատանքի։

VI.

Արտելի գործերի վարչությունը

53. Գործերի վարչությունը հանձնարարվում և ընդհանուր ժողովին և խորհրդին։

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

54. Ընդհանուր ժողովը բաղկացած և արտելի բոլոր լիազոր անդամներից։

55. Յուրաքանչյուր անդամի մի ձայն ունի միայն և ուրիշի փոխարեն չի կարող քվեարկել. ինչպես նաև մեկ ուրիշին չի կարող յանձնարարել՝ իրեն փոխարինելու ժողովներում։

56. Վորևե հարցում անձնականապես շահագրգռված արտելի անդամը, այդ հարցի վորոշման ժամանակ զրկվում և քվեարկելու իրավունքից։

57. Խորհրդի անդամները նույնպես չեն կարող վճռական ձայնի իրավունք ունենալ հետևյալ հարցերի քննության ժամանակ,—ինչպես՝ ա. հաշվետվության հաստատման, բ. նրանց գործունեության գնահատման, գ. և այն հարցերի, վորոնք նրանց պատասխանատվությանն չեն վերաբերում։

58. Ընդհանուր ժողովին նախագահում և խորհրդի և վերատեսուչ հանձնաժողովի կազմին չպատկանող անձնավորություն։

59. Խորհուրդը ընդհանուր ժողովներ հրավիրում և ըստ հարկի, վերատեսուչ հանձնաժողովի պահանջով և արտելի անդամների 1/10-ի պահանջով։

60. Յեթե ընդհանուր ժողով հրավիրելու առթիվ յեղած պահանջի ժամանակից մի շաբաթվա ընթացքում խորհուրդը չի գումարում այն,—ապա նա հրավիրվում և վերատեսուչ հանձնաժողովի կողմից։

61. Ընդհանուր ժողովը հանդիսանում և արտելի գերագույն մարմինը։ Կարևոր հարցերի լուծումը վերապահված և նրան միայն։ Մասնավորապես նրա գործունեությանն չեն վերաբերում.—ա. խորհրդի, վերատեսուչ հանձնաժողովի և արտելի մյուս մարմինների անդամների ընտրությունը, ինչպես նաև նրանց հեռացնելու և պայմանաժամից առաջ վերընտրելը, բ. անդամներ ընդունել և հեռացնել, գ. կանոնադրության փոփոխ-

ման ու լրացման, և արտելի գործունեության դադարեցման հարցերի լուծումը, դ. հաշվետվության, նախահաշվի և տնտեսական գործունեության ծրագրի քննությունն ու հաստատումը, աշխատանքի պայմանների վորոշումը, ե. փոխառություններ կընքելը և առանձնապես արժեքավոր իրերի ձեռք բերելը և զ. այն բոլոր հարցերին լուծում տալը, վորոնք վերեն խորհրդի լիազորություններից։

62. Ընդհանուր ժողովը համարվում է որինավոր, յերբ ներկա յեն անդամների կիսից վոչ պակաս։

63. Հոդ. 61-ի ա. և բ. կետերում թված հարցերի լուծման համար պահանջվում է արտելի անդամների վոչ պակաս 2|3 ներկայությունը։

64. Յեթե ընդհանուր ժողովի նշանակած որը, յոդ. 62 և 63 մատնանշված անդամների թիվը չե հավաքվում, ապա այդ ժողովի քննության դրված որակարգի հարցերի համար, վոչ ուշ քան 3 որից հետո նշանակվում է յերկրորդ ընդհանուր ժողովը, վորը անկախ ներկա յեղող անդամների թվից՝ համարվում է կայացած,— բացառությամբ միայն այն դեպքերից, յերբ ընդհանուր ժողով հրավիրվում է յոդ. 61-ի ա, բ, գ. կետերում մատնանշված հարցերի լուծման համար։

Ծանոթ.—Այս վերջին հարցերը վճռվում յեն և յերկրորդ ընդհանուր ժողովում, վոչ այլ կերպ, քան՝ վոչ պակաս բոլոր անդամների ընդհանուր թվի կեսի մասնակցությամբ։

65. Ընդհանուր ժողովում բոլոր հարցերը վորոշվում յեն ձայների հասարակ մեծամասնությամբ, բացառությամբ հոդ. 61-ի ա, բ և գ. կետերում յիշատակված հարցերի, յերբ վորոշման որինավորության համար պահանջվում է ժողովում ներկա յեղող անդամների 2|3 ձայներ։

66. Ընդհանուր ժողովի արձանագրությունները ժողովին ներկա յեղող անդամների ցուցակի հետ, գրվում և արձանագրության մատյանում և ստորագրվում է նախագահի, քարտուղարի և ներկա յեղող անդամների կողմից։

67. Ընդհանուր ժողովը արտելի գործադիր մարմինն է։

68. Խորհուրդը իր բոլոր գործերում, պարտավորություններում, ինչպես նաև կողմնակի անձնավորությունների և հաստատությունների հետ ունեցած հարաբերություններում՝ ներկայացնում է արտելը, առանց այդ առթիվ յատուկ հավատարիմ ունենալու։ Նա պահում է արտելի ամբողջ գույքը և վարում նրա ամբողջ ընթացիկ աշխատանքները, գործելով սույն կանոնադրության ուժյալների և ընդհանուր ժողովի վորոշումների հիման վրա։

69. Խորհուրդը ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ 61 և 63 հոդվածներում մատնանշված կարգով և բաղկանում է վոչ պակաս 3 անդամից և յերկու թեկնածուներից։

70. Խորհրդի նախագահը, վորը միևնույն ժամանակ արտելի ավագն է, ընտրվում է խորհրդի հաժար ընդհանուր ժողովի կողմից՝ ընտրված կազմից։

71. Խորհուրդ ընտրվում է մի տարի ժամանակով, սակայն մինչև իր լիազորությունների պայմանաժամի լրանալը՝ կարող է վերընտրվել։

72. Խորհրդի և վերատուգիչ հանձնաժողովի կազմի մեջ միաժամանակ մտնել չեն կարող, մինչև յերկրորդ աստիճանը ներառյալ ազգականներ։

73. Յեթե հաշվապահությունը հանձնարարվում է խորհրդին,— ապա հաշվապահի պարտականությունների և դանձապահի պաշտոնի միացումը արգելվում է։

74. Արտելի վարչության աշխատանքների քանակը ի նկատի ունենալով, արտելի ավագը, ինչպես նաև խորհրդի անդամները, կարող յեն մասամբ կամ բոլորովին ազատվել տնտեսության սովորական աշխատանքներից և վերոհիշյալ անձնավորություններին կարելի կլինի նշանակել հատուկ վարձատրություն։

75. Խորհրդի գործունեության շրջանակի և ներքին աշխատանքների դասավորման համար, սահմանվում է արտելի ընդհանուր ժողովի կողմից հաստատված հատուկ հրահանգ։

76. Արտելի տնտեսության ծավալը ի նկատի ունենալով, ընդհանուր ժողովը կարող է՝ ա) կամ խորհրդին ոժանդակ ընտրել մեկ կամ մի քանի հանձնաժողովներ՝ տնտեսության տեխնիկական, կամ նրա առանձին ճյուղերի ղեկավարման համար, բ) կամ՝ խորհրդի կազմը ավելացնել, գ) կամ՝ սահմանափակվել արտելի մեկ ավագի և նրա ոգնականի ընտրությամբ, տալով նրանց ներկա կանոնադրությամբ սահմանված խորհրդի իրավունքները և պարտականությունները։

VII.

Հաշվապահություն յեվ հաշվետվություն

77. Արտելի անտեսական գործունեության, նրա գրամական միջոցների ու ստացվածքի ճիշտ հաշվեառման համար, արտելում պահվում յեն հաշվեմատյաններ։ Դրանց մեջ գրվում յեն արտելի շրջանառությունները, գրամարկղի կանխիկ գումարը, մթերքների և դույքի ել և մուտքը, արտելի անդամների, մասնավոր անհատների և հաստատությունների հաշիվները։

78. Հաշվապահական տարին լրանալուց հետո, յերկու ամսից վոչ ուշ, խորհուրդը պարտավոր է ընդհանուր ժողովին ի հաստատություն ներկայացնելու արտելի տարեկան հաշվապահական գործունեության հետևանքները։

79. Արտելի հաշվապահական տարին համարվում է.....
..... ից, մինչև .....

80. Արտելի հաշվապահության, հաշվեավության ու նախահաշվի, ինչպես նաև ամբողջ դույքի ու գործունեության փաստական վերաստուգման համար, ընդհանուր ժողովը մի տարի ժամանակով, 3 հոգուց վոչ պակաս, ընտրում է վերաստուգիչ հանձնաժողով։

81. Տարեկան հաշիվը, գրքերի և փաստաթղթերի հետ միասին, վերաստուգիչ հանձնաժողովը ստուգում է և հենց նույն հաշվեավության վրա ել տալիս է իր բացատրություններն ու ստորագրում և հանձնում է ընդհանուր ժողովին ի քննություն։

82. Խորհրդի, առանց հարգելի պատճառների, նշանակված ժամանակին (տես հոդ. 78) տարեկան հաշվեավությունը չկազմելու դեպքում, վերաստուգիչ հանձնաժողովը պարտավոր է իր հսկողությամբ, ի հաշիվ խորհրդի անդամների, հաշվեավության կազմելը հանձնել ուրիշներին։

83. Ընդհանուր ժողովի հաստատված հաշիվը պահվում է արտելի գործերում, իսկ նրա վավերացրած պատճենը հաստատելուց հետո՝ հանձնվում է Հողժողկոմատի գյուղատնտեսական բաժնին,

VIII.

Արտելի լուծումը.

84. Արտելը իր գործունեությունը դադարեցնում է.— ա. արտելի ընդհանուր ժողովի վորոշման համաձայն, բ. Խորհրդային Իշխանության մարմինների կարգադրությամբ, յերբ

նրանց գործունեությունը չէ համապատասխանում. ներկա կանոնադրության, ինչպես նաև նրանց սանկցիայի դեպքում։

85. Արտելի լուծման մասին ընդհանուր ժողովի վորոշումը յերկու շաբաթվա ժամանակամիջոցում հայտնվում է ի գիտություն Հողժողկոմատի գյուղատնտեսական բաժնին։

86. Ընդհանուր ժողովի վորոշման համաձայն, արտելի գործերի լիկվիդացիան հանձնվում է խորհրդի անդամներին, կամ ուրիշ՝ յերեք հոգուց վոչ պակաս բաղկացած կազմի։

87. Լիկվիդացիոն հանձնաժողովի կազմի մեջ, վորպես այդ կազմի նախագահ մտնում է գավառական հողբաժնի ներկայացուցիչը։

88. Լիկվիդացիոն հանձնաժողովը պատասխանատու է և յենթարկվում է այն բոլոր կանոններին, վորպեսիք սահմանված են խորհրդի անդամների համար։

89. Լիկվիդացիայի կարգը սահմանվում է ընդհանուր ժողովի կողմից մշակված հատուկ հրահանգով։

90. Արտելի անդամների անդամավճարները վերադարձվում յեն, արտելի բոլոր պարտքերը վճարելուց հետո միայն։

91. Բոլոր պարտքերը վճարելուց, իրեն ներկայացրած բոլոր պահանջները բավարարելուց, ինչպես նաև անդամների անդամավճարները վճարելուց հետո, արտելի մնացած դույքը և միջոցները հանձնվում է Հողժողկոմատի գյուղատնտեսական բաժնին։ Հողբաժնից ստացված դույքը վերադարձվում է նրան։

92. Յեթե արտելի դույքը չէ բավարարում ծածկելու իր ստանձնած պարտականությունները,—ապա լիկվիդացիոն հանձնաժողովը պակասորդ գումարը պահանջում է արտելի անդամներից՝ իրենց պատասխանատվության սահմաններում, համաձայն 12-րդ հոդվածի։

93. Լիկվիդացիան վերջացնելուց հետո, լիկվիդացիայի հանձնաժողովը կազմում է իր գործունեության հաշիվը և վերաստուգիչ հանձնաժողովի յեզրակացությունների հետ ներկայացնում է լիկվիդացիայի ընդհանուր ժողովին և գյուղատնտեսական բաժնին ի հաստատություն։

024

IX

Կանոնադրության փոփոխման յեվ լրացման կարգը

94. Արաելի անդամների ընդհանուր ժողովը կարող է փոփոխել և լրացնել ներկա կանոնադրությունը։

95. Կանոնադրության մեջ կատարված բոլոր փոփոխությունների և լրացումների մասին խորհուրդը անմիջապես հայտնում է Հողժողկոմատի գյուղատնտեսական բաժնին ի գիտություն։ Կատարված փոփոխությունները և լրացումները հաստատվելուց հետո միայն, ստանում յեն օրենքի ուժ։

2013
<< Ազգային գրադարան >>
11423
NL0044083